



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16015

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հուլիսի 28-ի թիվ 112-րդ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ ԿԳ/78-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, Խորհրդի անդամներ՝ Լիպարիտ Սիմոնյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Մեծլումյանի,

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով փաստաբան Գևորգ Գրիգորյանի (արտոնագիրթիվ 82) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.02.2016թ-ին տրամադրված տեղեկանքի փաստաբան Գևորգ Գրիգորյանն ունի 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. մայիսից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

01.02.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 29-Ա/ԿԳ-16015 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Գևորգ Գրիգորյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

05.02.2016թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Կարապետ Աղաջանյանին (նիստը նախագահող):

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի հուլիսի 28-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Գևորգ Գրիգորյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն էտրիդի նիստին չի ներկայացել: 03.03.2016թ. փաստաբան Գևորգ Գրիգորյանի կողմից ներկայացվել է դիմում , որով վերջինս պարտավորվել է պարտքը մարել մինչև 30.03.2016թ.:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Գևորգ Գրիգորյանիը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 21.03.2001թ., որը հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.07.2016թ. տրամադրված տեղեկանքով,

2) փաստաբան Գևորգ Գրիգորյանը ունի 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. մայիսից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար, որը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.02.2016թ. տրամադրված տեղեկանքով,

3) Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.07.2016թ. էտրիդին տրամադրված տեղեկանքի համաձայն փաստաբան Գևորգ Գրիգորյանը իր անդամավճարի պարտքը չի վճարել:

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.07.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Գևորգ Գրիգորյանը (արտոնագիր 82, ստացված՝ 21.03.2001թ.) նկատմամբ 2006-2016թթ. ընկած ժամանակահատվածում կիրառվել են հետևյալ կարգապահական տույժերը՝

- 11.12.2015թ. թիվ ԿԳ/204-Ա որոշմամբ անդամավճար չվճարելու համար հարուցված կարգապահական գործի վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով,
- 30.11.2016թ թիվ ԿԳ/165-Ա որոշմամբ անդամավճար չվճարելու համար հարուցված կարգապահական գործիով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նկատողության ձևով, տույժը մարված է :

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գևորգ Գրիգորյանը պետք է ենթարկվել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր

պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշյալ չորս նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Գևորգ Գրիգորյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.07.2016թ. տրամադրված տեղեկանքով: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ չմարված կարգապահական տույժեր չունի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գևորգ Գրիգորյանին (արտոնագիր թիվ 82) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Գևորգ Գրիգորյանին (արտոնագիր թիվ 82) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Գևորգ Գրիգորյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Կարապետ Աղաջանյան